ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԳԵՂԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԳԵՂԱՄ ԳՐԻԳՈՐԵԱՆ, ՈՐ ՅԵՐԵՒԱՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր սէրն ու օրհնութիւնն ենք բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու տաղանդաշատ ու արժանաւոր զաւակիդ։

Մեծարգոյ Պրն Գրիգորեան, այսօր մեծ գոհունակութեամբ ենք անդրադառնում մշակութային Ձեր գործունէութեանը եւ տարիների բեղմնաւոր վաստակին։ Մայր Հայրենիքում ու նրա սահմաններից հեռու լայնօրէն ծանօթ է Ձեր անունը՝ որպէս բազմաթիւ մրցոյթների դափնեկիր։ Օպերային արուեստի անդաստանում ներդրած աւանդի համար Դուք արդարօրէն արժանացել էք Հայաստանի Հանրապետութեան եւ Լիտուայի ժողովրդական արտիստի բարձր կոչմանը։

Երաժշտական կրթութիւն ստանալով Առնո Բաբաջանեանի անուան երաժշտական ուսումնարանում, այնուհետեւ Երեւանի պետական կոնսերուատորիայում՝ Դուք երգարուեստի կատարողական Ձեր հմտութիւնն ու վարպետութիւնը առաւել կատարելագործել էք Իտալիայի համբաւաշատ «Լա Սկալա» թատրոնում։ Աշխարհի տարբեր երկրների հանրահայտ բեմահարթակներում Դուք բազմիցս հանդէս էք եկել բարձրարուեստ կատարումներով։ Ձեր ելոյթները «Եւգենի Օնեգին», «Պատերազմ եւ խաղաղութիւն « «Լուկրեցիա Բորջիա « «Բոհեմ» եւ այլ օպերաներում բարձր գնահատանքի են արժանացել երաժշտասէր հասարակայնութեան կողմից։ Մեծ յաջողութեամբ Դուք դրսեւորել էք Ձեր տաղանդը նաեւ օպերաների բեմադրութիւններում՝ վարպետութեամբ բեմականացնելով ականաւոր ու մեծանուն հեղինակների հռչակաւոր ստեղծագործութիւնները, արժանանալով հայ եւ այլազգի հանդիսատեսների գովասանքին։

Մեզ համար առանձնակի ուրախութիւն է հաստատել, որ այսօր Դուք նոյն արդիւնաւէտութեամբ շարունակում էք Ձեր նշանակալի մշակութային գործունէութիւնը՝ որպէս գեղարուեստական ղեկավար Երեւանի Ալեքսանդր Սպենդիարեանի անուան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի՝ Ձեր կորովն ու եռանդը ներդնելով օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի առաւել բարգաւաճման, ինչպէս նաեւ երաժշտական մշակոյթի զարգացման շնորհակալ գործում։

Մեծարգոյ Տիար Գրիգորեան, մշակոյթի անդաստանում Ձեր վաստակի եւ ծառայութիւնների բարձր գնահատանքով Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով առ Աստուած՝ մաղթում ենք Ձեզ քաջառողջ կեանքի արեւառատ երկար օրեր: Թող Բարձրեալ Տէրը պարգեւի Ձեզ նոր յաջողութիւններ, որպէսզի շարունակէք բոլորանուէր Ձեր ծառայութիւնը մատուցել մշակոյթին, Հայրենիքին ու ժողովրդին:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 1-ն Ապրիլի
Յամի Տեառն 2006 եւ ի թուին Հայոց ՌՆԾԵ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 343